ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

21.08.2013թ.
207-ի 6

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի
նախարար պարոն Արտեմ Ասատրյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ասատրյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Քանի՞ ծառայողական բջջային հեռախոսահամար է գործարկվում ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կողմից։
2. Որքա՞ն է կազմել ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կողմից գործարկվող ծառայողական բջջային հեռախոսամահարներից յուրաքանչյուրի ծառայությունների վարձը (զանգերի վարձ, կարճ հաղորդագրությունների վճար, ռոումինգ, ինտերնետ) 2013թ.-ի հունիս եւ հուլիս ամիսների համար:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում։ Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան